



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 մարտի 2005թ.

N 133

ք.Ստեփանակերտ

ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԸՆԴԵՐՔՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՍԱԴԻԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո Ր Ո Շ ՈՒ Մ Է**:

Հաստատել երկրաբանական ուսումնասիրության նպատակով ընդերքն օգտագործման տրամադրելու կարգը՝ համաձայն հավելվածի:

ԼՂՀ վարչապետ

Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Կ Ա Ր Գ
ԵՐԿՐԱՔԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ
ԸՆԴԵՐՔՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է երկրաբանական ուսումնասիրության նպատակով ընդերքն օգտագործման տրամադրելու (բացի Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերով նախատեսված երկրաբանական ուսումնասիրության նպատակով ընդերքօգտագործման իրավունքի տրամադրումից) կարգը:

2. Ընդերքը երկրաբանական ուսումնասիրության է տրամադրվում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի և «Ընդերքն ուսումնասիրության և օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրելու (կոնցեսիայի) մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով, սույն կարգով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

3. Երկրաբանական ուսումնասիրության նպատակով ընդերքի օգտագործման իրավունքը (այսուհետ՝ ընդերքօգտագործման իրավունք) դադարեցվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքով և «Ընդերքն ուսումնասիրության և օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրելու (կոնցեսիայի) մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքով սահմանված հիմքերով և կարգով:

4. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները գրանցվում և հաշվառվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչությունում (այսուհետ՝ լիազոր մարմին)՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2003 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 332 որոշմամբ սահմանված կարգով:

II. ԵՐԿՐԱՔԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԸՆԴԵՐՔԻ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ՝
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ

5. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված երկրաբանական ուսումնասիրության

նպատակով ընդերքօգտագործման իրավունքը տրամադրվում է երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների պետական գրանցումից հետո:

6. Սույն կարգի 5-րդ կետով սահմանված ընդերքօգտագործման իրավունքն ստանալու համար ընդերքօգտագործողը լիազոր մարմին է ներկայացնում դիմում:

Դիմումին կից ներկայացվում են՝

ա) անձնագրի տվյալները, եթե դիմումատուն ֆիզիկական անձ է.

բ) պետական ռեգիստրի վկայականի և կանոնադրության պատճենները, եթե դիմումատուն իրավաբանական անձ է.

գ) ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների նախագիծը (այսուհետ՝ նախագիծ), որում նշվում են իրականացվող ուսումնասիրության աշխատանքների ձևը, նպատակը, մեթոդիկան և ժամկետները, և ուսումնասիրվող տեղամասի տեղադիրքը՝ 1:50000 մասշտաբից ոչ փոքր տոպոհիմքի վրա, երկրաբանական քարտեզը՝ իր կտրվածքներով (բացառությամբ երկրաբանական հանույթի և քարտեզագրման աշխատանքների):

7. Դիմումի գրանցումից հետո 10-օրյա ժամկետում այն ենթակա է քննարկման, և դրական եզրակացության դեպքում ներկայացված ուսումնասիրության աշխատանքները լիազոր մարմնի կողմից ստանում են պետական գրանցում:

8. Լիազոր մարմինը եզրակացության հիման վրա որոշման ընդունումից հետո 5-օրյա ժամկետում գրավոր տեղեկացնում է դիմումատուին:

9. Լիազոր մարմինը մերժում է դիմումը, եթե՝

ա) դիմումատուն ընդերքօգտագործման առնչությամբ ունեցել է կամ ունի պայմանագրային պարտավորությունների խախտում և այն չի վերացրել.

բ) ընդերքի այն տեղամասը կամ դրա մի մասը, որի համար նա դիմել է, հատկացված է այլ ընդերքօգտագործողի.

գ) դիմումատուի ներկայացրած փաստաթղթերը թերի են, և լիազոր մարմնի կողմից դրա մասին տեղեկացումից (ծանուցումից) հետո դիմումատուն մեկամսյա ժամկետում չի վերացնում նշված թերությունները:

III. ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԸՆԴԵՐՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ՝ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ

10. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 17-րդ հոդվածի 5-րդ կետով նախատեսված ընդերքօգտագործման իրավունքը տրամադրվում է նախագծի և պայմանագրի հիման վրա:

11. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 26-ի թիվ 207 որոշմամբ հաստատված հատուկ ցանկում ընդգրկված աշխատանքներն իրականացնելիս, ինչպես նաև այն դեպքերում, երբ անհրաժեշտ է լեռնային փորվածքների և հորատանցքերի անցում, ընդերքօգտագործման իրավունքը

տրամադրվում է լիազոր մարմնի և ընդերքօգտագործողի միջև կնքված պայմանագրի հիման վրա:

**IV. ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԸՆԴԵՐՔԻ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ` ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ**

12. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 17-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ կետերով նախատեսված ընդերքօգտագործման իրավունքը տրամադրվում է համաձայնության հիման վրա:

13. Ընդերքօգտագործողը համաձայնություն ստանալու համար լիազոր մարմին է ներկայացնում դիմում:

Դիմումին կից ներկայացվում են`

ա) անձնագրի տվյալները, եթե դիմումատուն ֆիզիկական անձ է,

բ) պետական ռեգիստրի վկայականի և կանոնադրության պատճենները, եթե դիմումատուն իրավաբանական անձ է,

գ) տեղամասի տեղադիրքը` 1:50000 մասշտաբից ոչ փոքր տոպոհիմքի վրա, և տեղեկատվություն իրականացվող աշխատանքների ձևի, նպատակի ու ժամկետների մասին:

14. Երկրաբանական հավաքածուների ստեղծման նպատակով կատարվող աշխատանքների դեպքում դիմումում պետք է նշվի հավաքվող երկրաբանական նյութի (ապար, միներալ, բրածո, նմուշ) քանակը:

15. Ելնելով հավաքածուների ստեղծման աշխատանքների ձևից և նպատակներից` լիազոր մարմինը կարող է սահմանել հավաքվող նյութի թույլատրելի չափաքանակը:

16. Դիմումի գրանցումից հետո 10-օրյա ժամկետում այն ենթակա է քննարկման, և դրական եզրակացության դեպքում լիազոր մարմինը տալիս է հայցվող աշխատանքների իրականացման համաձայնությունը` համաձայն ձևի:

17. Լիազոր մարմինը եզրակացության հիման վրա որոշման ընդունումից հետո 5-օրյա ժամկետում գրավոր տեղեկացնում է դիմումատուին:

18. Լիազորված մարմինը մերժում է դիմումը, եթե`

ա) դիմումատուն ընդերքօգտագործման առնչությամբ ունեցել է կամ ունի պայմանագրային պարտավորությունների խախտում և այն չի վերացրել,

բ) ընդերքի այն տեղամասը կամ դրա մի մասը, որի համար նա դիմել է, հատկացված է այլ ընդերքօգտագործողի,

գ) դիմումատուի ներկայացրած փաստաթղթերը թերի են, և լիազոր մարմնի կողմից դրա մասին տեղեկացումից (ժանուցումից) հետո դիմումատուն մեկամսյա ժամկետում չի վերացնում նշված թերությունները:

**ԼՂՀ կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Ս. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՐՄՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՈՐՈՇԱԿԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ (ՏԵՂԱՄԱՍՈՒՄ) ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչությունը տալիս է իր համաձայնությունը՝

_____ (տեղամասի անվանումը, տեղադիրքը)

_____ շրջանը, հեռավորությունը մոտակա բնակավայրից (բնակավայրերից), տարածքի մակերեսը)

_____ -ի կողմից մինչև _____ (իրավաբանական անձի անվանումը կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը, հայրանունը)

_____ 200 _____ թ. ժամանակահատվածը

_____ ուսումնասիրություններ կատարելու նպատակով:

Պաշտոնատար _____ անձի _____ (ստորագրությունը) _____ (ազգանունը, անունը)

_____ (զբաղեցրած պաշտոնը)

« _____ » _____ 200 թ.

Կ.Տ.